ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-10153

«17» 06 2020 թ.

«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝
ՆՈՐԻԿ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ՀՀ ք.Երևան, Տիգրան Մեծի 4

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.04.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/42» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ.127 դպրոցի հարակից տարածքի բարեկարգման և ճանապարհի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված եղել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ (03.06.2020 թվական):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 7.13 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 08.06.2020 թվականի հ. 16/01-154գրությունը՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129